ՍԱՍՈՒՆ ԱԱՐԻԲԵԿՅԱՆ

«ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Պետության հզորությունը» և «պետության աշխարհաքաղաքական հզորությունը» աշխարհաքաղաքականության կարևոր հասկացություններից են: Դրանց նկատմամբ ուշադրությունը պայմանավորված է հատկապես՝

- պետության աշխարհաքաղաքական հետազոտության մեթոդաբանության մշակման անհրաժեշտությամբ, այս խնդրի բաղադրիչ խնդիրների բովանդակության հստակեցման ու համակարգման անհրաժեշտությամբ,
- «պետության աշխարհաքաղաքական հզորության» սահմանման և դրա բնութագրիչների համակարգի մշակման անհրաժեշտությամբ,
- աշխարհաքաղաքական ուժերի բազմակարգության և դրա փոփոխությունների ուսումնասիրության համար տեսական-մեթոդաբանական հիմքի մշակման անհրաժեշտությամբ,
- աշխարհի աշխարհաքաղաքական շրջանացման մեթոդաբանության մշակման համար անհրաժեշտ ելակետային դրույթներ ունենալու անհրաժեշտությամբ,
- աշխարհաքաղաքական սուբյեկտների միջև տարածքների վերահսկման համար մրցակցության գործընթացի ուսումնասիրության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ,
- պետության աշխարհաքաղաքական դիրքի հետազոտության մեթոդաբանության մշակման, «պետության աշխարհաքաղաքական դիրքի» և «պետության աշխարհաքաղաքական հզորության» փոխառնչությունների բացահայտման անհրաժեշտությամբ,
- ձևավորվող նոր աշխարհակարգում պետությունների աշխարհաքաղաքական անվտանգության ու զարգացման հայեցակարգերի մշակման համար անհրաժեշտ մեթոդաբանության ստեղծման անհրաժեշտությամբ,
- աշխարհաքաղաքականության տեսական ընդհանրացումների և որոնողական կանխատեսման արժանահավատության ապահովման անհրաժեշտությամբ և այլն:

«Պետության հզորության» մասին պատկերացումները:

Աշխարհաքաղաքական հետազոտություններում պետության ուժը ներկայացնելու համար հիմնականում օգտագործել են «պետության հզորություն» հասկացությունը:

«Геополитика: Популярная энциклопедия»-ն (Ծ., 2002) այն սահմանում է որպես «առկա բոլոր նյութական և հոգևոր հնարավորությունների ամբողջության ռեալիզացված մաս, որն օգտագործվում է որոշակի նպատակներին հասնելու համար» [3, էջ 325]:

«Պետության հզորությունը» եղել է աշխարհաքաղաքականության թե ավանդական և թե ժամանակակից դպրոցների (բրիտանական, գերմանական, ամերիկյան և այլն), դրանց ներկայացուցիչների (Ա. Թ. Մեհեն, Ռ. Չելլեն, Ն. Ջ. Սպայկմեն, Ս. Կոեն, Հ. Մորգենթաու, Ս. Հանտինգտոն և ուրիշներ) ու հետազոտական կենտրոնների (Ջորջթաունի համալսարանի ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոն, Միջամերիկյան ռազմական քոլեջ և այլն) ուշադրության կենտրոնում:

«Պետության (ազգային) հզորություն» հասկացության բովանդակության, բաղադրիչների ու գնահատման մասին պատկերացումների վերլուծությունը թույլ է տալիս անել որոշ մտահանգումներ:

Գրեթե բոլոր մասնագետները խուսափում են սահմանել այս հասկացությունը, լավագույն դեպքում բավարարվում են բնութագրմամբ, հիմնական բնութագրիչները ներկայացնելով, ընդ որում, առանց արժանահավատ հիմնավորումների կամ ընդհանրապես առանց հիմնավորումների: Անտեսվում են «պետություն» համակարգի առանձին բաղադրիչները, որոշների նկատմամբ նկատելի է առանձնահատուկ վերաբերմունք: Առանձին բաղադրիչների բովանդակության և հիմնական հատկանիշների մասին առկա է բազմակարծություն:

Պետության հզորության բնութագրիչների համակարգերը մանրամասեցման տարբեր աստիճանի են: Սակավաթիվ բնութագրիչներով համակարգեր են օրինակ Ռ. Չելլենի, Ս. Հանտինգտոնի համակարգերը, իսկ մեծաթիվ բնութագրիչներով՝ օրինակ Ս. Կոենի, Ն. Ջ. Սպայկմենի, Հ. Մորգենթաուի, Ջորջթաունի համալսարանի ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնի համակարգերը: Մանրամասեցման բարձր աստիճանի կիրառումը, կարծում ենք, ճիշտ է: Դա հնարավորություն է տալիս ընդհանրական պատկերը ավելի արժանահավատ ներկայացնել:

Աշխարհաքաղաքական հետազոտություններում պետության հզորության բնութագրիչներից առանձնահատուկ կարևորություն են ստանում նրանք, որոնք կամ էականորեն մեծացնում են պետության աշխարհաքաղաքական էքսպանսիայի հնարավորությունները, կամ՝ փոքրացնում տվյալ պետության վրա այլ պետությունների կողմից կիրառվող աշխարհաքաղաքական էքսպանսիայի արդյունավետությունը: Դրանք հատկապես տնտեսական և քաղաքական բնութագրիչներն են: Մասնավորապես, պետության հզորության տնտեսական բաղադրիչը ինտեգրալ բնութագրիչով ներկայացնող Ռ. Չելլենը գտնում է, որ պետության տնտեսական հզորությունը որոշում են սեփական ռեսուրսների միջոցով պետության գոյությունը պահպանելու ունակությունը, համաշխար-

հային տնտեսական շրջանառության մեջ պետության դերը և տնտեսական քաղաքականությունը [6, էջ 42], իսկ ըստ Ջորջթաունի համալսարանի ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնի՝ տնտեսական հզորությունը որոշվում է համախառն ազգային արդյունքով, էներգետիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի վիճակով և օգտակար հանածոների պաշարներով [2]: Իսկ օրինակ քաղաքական բնութագրիչներից Ս. Թ. Սեհենը առանձնացնում է կառավարության բնույթը [7, էջ 242], Ռ. Չելլենը՝ պետական կառավարման ձևը [6, էջ 42], Հ. Մորգենթաուն՝ դիվանագիտության որակն ու կառավարության որակը [9, էջ 15], Ն. Զ. Սպայկմենը՝ քաղաքական կայունությունը [5, էջ 63], իսկ Միջամերիկյան ռազմական քոլեջը՝ երկրի քաղաքական ղեկավարության համոզելու ուժը, երկրի բնակչությանը և դաշնակիցներին իր ետևից տանելու կարողությունը [2]:

«Геополитика: Популярная энциклопедия»-ն (Ծ., 2002) որպես «պետության հզորություն» կատեգորիական համակարգի կարևորագույն բաղադրիչներ ներկայացնում է «պետության մարտական հզորությունը», «պետության ռազմական հզորությունը», «պետության ռազմաքաղաքական հզորությունը», «պետության ռազմատնտեսական հզորությունը», «պետության տնտեսական հզորությունը» [3, էջ 325-326]: Սա խոսում է այն մասին, որ թեև ժամանակակից աշխարհաքաղաքականությունը աշխարհաքաղաքական մրցակցության գործընթացում էքսպանսիայի ձևերից ավելի արդյունավետ համարում է նորագույն ձևերը (տնտեսական, մշակութային-գաղափարական և այլն), սակայն, ավանդույթին համաձայն, ռազմականի դերը դեռևս համարվում է շատ կարևոր:

Պետության ամբողջական հզորության մեջ ռազմական հզորության կարևոր դերը իրենց մշակած համակարգերում ներկայացրել են տարբեր մասնագետներ և հետազոտական կենտրոններ (Ս. Հանտինգտոն, Ս. Կոեն, Հ. Մորգենթաու, Ջորջթաունի համալսարանի ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոն և այլն): Օրինակ, Ս. Հանտինգտոնը «ռազմական հզորություն» և «ռազմական ներուժ» հասկացությունները հոմանիշներ համարելով՝ վերջինիս բնութագրիչները բաժանում է 4 խմբի 1. քանակական (մարդկանց, զենքի, տեխնիկայի և ռեսուրսների թիվը), 2. տեխնոլոգիական (սպառազինման և տեխնիկայի արդյունավետությունը և կատարելության աստիճանը), 3. կազմակերպական (զորքերի կարգավորվածությունը, կարգապահությունը, ուսուցման մակարդակն ու բարոյական ոգին, ինչպես նաև հրամանատարության և ղեկավարման արդյունավետությունը), 4. հասարակական (հասարակության՝ ռազմական ուժի արդյունավետ կիրառման ունակությունը և ցանկությունը) [10, էջ 126]:

Բնակչության բնութագրիչներից ավելի շատ ուշադրություն է դարձվում բնակչության թվի վրա, հիմնականում անտեսվում են բնակչության որա-

կական բնութագրիչները, սակայն ոմանք ներկայացնում են նաև որակական բնութագրիչներ, օրինակ, Ն. Զ. Սպայկմենը առանձնացնում է ազգային ոգին [5, էջ 63], Հ. Մորգենթաուն՝ ազգային բնավորությունն ու ազգային բարոյականությունը [9, էջ 15], Ս. Կոենը՝ ազգային նպատակներն ու ազգային մենթալիտետը [6, էջ 108]:

Պետության հզորության բնութագրիչների համակարգերում հաճախ ներկայացվում են բնական ռեսուրսները, իսկ դրանցից՝ հանքային ռեսուրսները, սակայն կան մասնագետներ, որոնք չեն անտեսում նաև բնական ռեսուրսների այլ տեսակները: Օրինակ, Ս. Կոենը կարևոր է համարում նաև հողային և ջրային ռեսուրսները [6, էջ 108]:

Պետության աշխարհագրական դիրքը ոմանք (Ա. Թ. Մեհեն, Հ. Մորգենթաու) ներառում են պետության հզորության բնութագրիչների համակարգ, ոմանք՝ ոչ: Ներառելը, կարծում ենք, կարևոր է և ճիշտ, որովհետև այն պետական տարածքի որակական կարևոր բնութագրիչ է, համաշխարհային տարածությունում պետության տեղն ու դերը ներկայացնող հասկացություն: Սակայն սա նաև դժվարացնում է պետության հզորության գնահատման մեթոդաբանության մշակումը:

Կան մասնագետներ, որոնք առանձնահատուկ նշանակություն են տալիս պետության ծովային հզորությանը: Օրինակ, Ա. Թ. Մեհենը, իր կողմից ներկայացրած պետության հզորության բոլոր բնութագրիչների անհրաժեշտությունը կապում է ծովում ազդեցության, արդյունավետ գործառնության հետ, միաժամանակ տալիս է նաև պետության ծովային ուժի բանաձևը [7]:

Մեր կարծիքով, կան բնութագրիչներ, որոնք և պետության հզորության, և ներուժի բնութագրիչ են և ռեսուրս: Օրինակ, այդպիսինն է աշխարհագրական դիրքը: Իսկ օրինակ օգտակար հանածոյի չարդյունահանված պաշարը չի կարող լինել հզորության բնութագրիչ: Ընդհանրապես «պետության հզորություն», «պետության ներուժ» և «պետության ռեսուրսներ» հասկացությունների և դրանց բնութագրիչների փոխառնչությունների ուսումնասիրությունը արդիական է հատկապես աշխարհաքաղաքականության համար:

Առանձնահատուկ կարևորության խնդիր է նաև պետության հզորության բնութագրիչների ինտեգրման հիմնարար մեթոդիկայի մշակումը, որի բարդությունը պայմանավորված է վերջինիս լուծման համար մեթոդաբանական ոչ բավարար հնարավորություններով և պետության հզորության որոշ բնութագրիչների քանակական արտահայտման բարդություններով: Մշակված մեթոդներից համեմատաբար հաջողված կարելի է համարել Զորջթաունի համալսարանի ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնի և Միջամերիկյան ռազմական քոլեջի մասնագետների մշակած բանաձևերը, որոնք, կարծում ենք, ամբողջական չեն, սակայն նորի մշակման համար կարող են օժանդակող նշանակություն ունենալ:

«Պետության աշխարհաքաղաքական հզորություն» հասկացությունը:

«Պետության աշխարհաքաղաքական հզորությունը» «պետության հզորություն» կատեգորիական համակարգի բաղադրիչ է:

Համեմատած «պետության հզորության» հետ, այն քիչ է օգտագործվում: Ոմանց կողմից այս հասկացության օգտագործումը խոսում է աշխարհաքաղաքական հետազոտություններում պետության ուժը «պետության աշխարհաքաղաքական հզորության» միջոցով ներկայացնելու կարևորության և անհրաժեշտության մասին, աշխարհաքաղաքական հզորության բաղադրիչների համակարգի մշակման անհրաժեշտության մասին: Մասնավորապես, Վ. Ա. Դերգաչևը աշխարհաքաղաքականության դասագրքում, հիմնական հասկացությունների բաժնում «աշխարհաքաղաքական հզորությանը» առանձնահատուկ տեղ է հատկացրել: Ըստ նրա՝ «աշխարհաքաղաքական հզորությունը պետության ռազմաքաղաքական, բնական-աշխարհագրական, նյութական, ժողովրդագրական և հոգևոր (արժեքային) ռեսուրսների ամբողջությունն է» [4, էջ 57]: Ընդ որում, պետության աշխարհաքաղաքական հզորության բնութագրիչների համակարգում նա կարևոր տեղ է հատկացնում ծովային հզորությանը՝ այն ներկայացնելով որպես բնական-աշխարհագրական բնութագրիչների, ռազմական, առևտրական և այլ նավատորմերի հզորության և մերձափնյա ենթակառուցվածքի ամբողջություն: Պետության աշխարհաքաղաքական հզորության բնութագրիչների համակարգ է ներառել նաև այնպիսիները (ինֆորմացիոն ռեսուրսների առկայությունը, բնակչության գնողունակությունը, սպառման ներքին շուկայի տարողությունը, մարդկային զարգացման համաթիվը, նորամուծությունների ճանապարհով պետության զարգանալու ընդունակությունը), որոնք չեն հանդիպում պետության հզորության բնութագրիչների համակարգերում: Հեղինակը ոչ միայն չի տալիս դրանց աշխարհաքաղաքական լինելու հիմնավորումները, այլև որոշ դեպքերում հարց է՝ դրանք ռեսու՞րս են, թե՞ ոչ (հզորությունը ներկայացնում է որպես ռեսուրսների ամբողջություն):

Թեև կան ռեսուրսներ, որոնց կարելի է նաև հզորության բնութագրիչներ համարել (ինչպես նշվեց վերևում), սակայն «ռեսուրսների ամբողջությունը» և «հզորությունը» նույնացնելը, մեր կարծիքով, սխալ է: Օգտակար հանածոների հետախուզված (ինչպես նաև երկրաբանական) հարուստ պաշարներ ունեցող, սակայն դրանք ռեալիզացնելու, արդյունահանելու հնարավորություններ չունեցող պետությունը կարող է աշխարհաքաղաքական բարձր կարգի ուժերի առանձնահատուկ ուշադրության առարկա, աշխարհաքաղաքական էքսպանսիայի օբյեկտ հանդիսանալ: Այս դեպքում օգտակար հանածոների հարուստ պաշարները կարող են ոչ միայն չազդել նրա ընդհանրական հզորության մակարդակի բարձրացմանը, այլև, ընդհակառակը, մեծացնել նրա խոցելիությունը: Պետության հզորության (նաև աշխարհաքաղաքական) համար

կանոր է տվյալ պետության կողմից ռեսուրսների ռեալիզացիան: Այսինքն, հզորությունը ոչ թե ռեսուրսների ամբողջությունն է, այլ՝ ռեալիզացված ռեսուրսների ամբողջությունը:

«Պետության աշխարհաքաղաքական հզորության» բովանդակության հստակեցման և սահմանման համար կարևոր է «աշխարհաքաղաքականի» բովանդակությունը: Իսկ վերջինիս մասին թեև տարակարծիք են, սակայն, մեր կարծիքով, այն ընդհանուր առմամբ ճիշտ է ներկայացնում «աշխարհաքաղաքականության» առավել տարածված սահմանումը. «աշխարհաքաղաքականությունը գիտություն է տարածության վերահսկողության մասին» [8, էջ 8]: «Տարածության (տարածքի) վերահսկողությունը» «աշխարհաքաղաքականությունը», ինչպես նաև «աշխարհաքաղաքականը» սահմանող (բնութագրող) թեև հիմնական, ընդհանրացնող և ամենակարևոր հասկացությունն է, սակայն, մեր կարծիքով, քանի որ անվերջ պայքար է մղվում այդ գործընթացի մասնակիցների՝ աշխարհաքաղաքական սուբյեկտների կողմից իրենց ազդեցության ոլորտները պահպանելու և ընդարձակելու համար և աշխարհաքաղաքականության բովանդակությունը հնարավոր չէ պատկերացնել առանց այդ մրցակցության հետազոտությունների (որի արդյունքում էլ աշխարհաքաղաքական գրականության մեջ շրջանառվում է «աշխարհաքաղաքական մրցակցություն» հասկացությունը), ուստի ինչպես «աշխարհաքաղաքականության», այնպես էլ «աշխարհաքաղաքականի» սահմանման (բնութագրման) համար կարևոր է ոչ միայն «տարածության (տարածքի) վերահսկողությունը», այլև «դրա համար մրցակցությունը»: Վերջիններիս համար կարևոր է նաև ինչպես համաշխարհային տարածության, այնպես էլ նրա բաղադրիչների (ենթակարգային միավորների) մասին շեշտադրումը, որովհետև ժամանակակից աշխարհաքաղաքականության մեջ առանձնահատուկ կարևորություն է տրվում աշխարհաքաղաքական տարածության ենթակարգային բոլոր միավորներին, վերահսկողությունը և դրա համար մրցակցությունը վերաբերում է ինչպես համաշխարհային տարածությանն ընդհանրապես, այնպես էլ նրա ենթակարգային տարբեր բաղադրիչներին:

Այսինքն, «համաշխարհային տարածության և նրա բաղադրիչների վերահսկումն ու դրա համար մրցակցությունը» հենց «աշխարհաքաղաքականը» սահմանող հասկացությունն է և «աշխարհաքաղաքականն» իր բովանդակությունում ունեցող «պետության աշխարհաքաղաքական հզորություն» հասկացության սահմանումը դրա միջոցով տալը, կարծում ենք, ճիշտ է և հիմնավորված:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը և «հասկացություն» իմացաբանական հասկացության պահանջները [1, էջ 77-91], փորձենք սահմանել «պետության աշխարհաքաղաքական հզորություն» հասկացությունը:

Պետության աշխարհաքաղաքական հզորությունը համաշխարհային տարածության և նրա բաղադրիչների վերահսկման և դրա համար մրցակցության գործընթացում պետության իրականացված ռեսուրսների ամբողջությունն է:

Պետության աշխարհաքաղաքական հզորությունը պետության աշխարհաքաղաքական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բնութագրիչ է, աշխարհաքաղաքական անվտանգության և զարգացման բնութագրիչ, պետության աշխարհաքաղաքական դիրքի բարելավման հնարավորություն, աշխարհաքաղաքական անվտանգության ապահովման և աշխարհաքաղաքական զարգացման հնարավորություն:

Եթե հաշվի առնենք «աշխարհաքաղաքականի» բովանդակությունը պայմանավորող տարածքների վերահսկման մեթոդների և էքսպանսիայի ձևերի ժամանակի ընթացքում փոփոխվելու իրողությունը, ապա ակնհայտ է դառնում «պետության աշխարհաքաղաքական հզորության» զարգացող և պատմական կատեգորիա լինելու փաստը:

Աշխարհաքաղաքականության զարգացման համար առանձնահատուկ կարևորություն ունի պետության աշխարհաքաղաքական հզորության բնութագրիչների համակարգի մշակումը, որը հատկապես կարևոր է աշխարհաքաղաքական ուժերի բազմակարգային համակարգի որոշման ու աշխարհի աշխարհաքաղաքական շրջանացման համար:

Պետության աշխարհաքաղաքական հզորության բնութագրիչների համակարգի և գնահատման մեթոդիկայի մշակման համար առանձնահատուկ կարևորություն ունեն՝

- «պետություն» համակարգի մասին պատկերացումները,
- ռեսուրսների համակարգի մասին պատկերացումները,
- պետության ներուժի բնութագրիչների մասին պատկերացումները,
- արտաքին քաղաքականության դետերմինանտների մասին պատկերացումները,
- «աշխարհաքաղաքական գործոնների» մասին պատկերացումները,
- պետության հզորության մասին Ս. Կոենի պատկերացումները, որը նա հիմք է ընդունել աշխարհի աշխարհաքաղաքական շրջանացման, աշխարհաքաղաքական տարածության ենթակարգությունը ներկայացնելու ժամանակ,
- Ջորջթաունի համալսարանի ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնի և Միջամերիկյան ռազմական քոլեջի մասնագետների մշակած պետության հզորության բնութագրիչների համակարգերը, ինչպես նաև պետության հզորության գնահատման բանաձևերը,
- տարածքների վերահսկման մեթոդների և աշխարհաքաղաքական էքսպանսիայի ձևերի (ռազմական, տնտեսական, մշակութային-գաղափարական, ինֆորմացիոն և այլն) ու պետության (ազգային) հզորության համանուն

բնութագրիչների փոխառնչությունների բացահայտումը, պետության հզորության բնութագրիչների և ընդհանրապես պետության ընդհանրական հզորության վրա դրանց ազդեցության բացահայտումը:

Մինչ պետության աշխարհաքաղաքական հզորության հետազոտության մեթոդաբանության մշակումը, աշխարհաքաղաքական մրցակցության գործընթացում պետության ուժի ուսումնասիրություններում հատկապես կարևոր է պետության (ազգային) հզորության բնութագրիչների համակարգից աշխարհաքաղաքական էքսպանսիայի ձևերի համանուն բնութագրիչներին առանձնահատուկ տեղ տալը, այդ բնութագրիչները հնարավորինս մանրամասն ներկայացնելը:

Վերը շարադրվածը հիմնավորում է պետության հզորության և պետության աշխարհաքաղաքական հզորության բնութագրիչների համակարգերի և գնահատման մեթոդաբանության մշակման բարդությունն ու անհրաժեշտությունը:

Օգտագործված գրականություն

1. Բրուտյան Գ. Ա. Տրամաբանության դասընթաց. Դասագիրք բուհերի համար / [Խմբ. Ռ. Զ. Ցիջյան և ուրիշ.]. Երևանի պետ. համալս. 4-րդ վերամշ. և լրաց. հրատ.. Եր.. 1987
2. **Быстров Н.** Методика оценки могущества государства. Зарубежное военное обозрение, N 9, 1981, с. **12-15**
3. Геополитика. Новая мировая энциклопедия. Авторы сост. **В. Баринов**ец, **Д. Баринов**ец, **В. Малилов**. Под общей ред. **В. Малилова**. М., 2002
4. **Дергачев В. А.** Геополитика. Учебник для вузов. М., 2004
5. **Дугин А. Г.** Основы геополитики. Геополитическое будущее [illegible]. Мыслить пространством. Изд. 4-е. М., 2000
6. **Колосов В. А., Мироненко Н. С.** Геополитика и политическая география. Учебник для вузов. М., 2001
7. **Мэхэн А. Т.** Влияние морской силы на историю. В кн. Геополитика. Антология. М., 2006, с. 221-243
8. Нарлов Н. А., Нарлов В. Н. **Геополитика. Учебник для студентов вузов. 4-е изд., перераб. и доп. М., 2007.**
9. **Сирота Н. М.** Геополитика. Краткий курс. СПб, 2006
10. **Хантингтон С.** Столкновение цивилизаций / **С. Хантингтон.** Пер. с англ. М., 2003